Doi: 10.56737/2953-7843-2024.05-84

ՍԻՐԱՆՈՒՇ ԲԵԳԼԱՐՅԱՆ
ՄՄ

ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՐՈՍ ՏԱՐՈՆԱՑՈՒ ՆԿԱՐԱԶԱՐԴԱՄ ԹԻՎ 206 ՁԵՌԱԳՐՈՒՄ

Սկիզբը՝ թիվ ե.

4. ԱՆՄՈՐՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ ԹՈՐՈՍ ՏԱՐՈՆԱՑՈՒ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Տարոնացին ՄՄ 206 ձեռագրի նկարազարդման մեջ՝ Նոր Կտակարանի հատվածում, Քրիստոսին ներկայացնում է երկու պատկերագրությամբ՝ մորուսով եւ անմորուս։

Խոսելով Քրիստոսի՝ Տարոնացու կիրառած երկու պատկերագրությունների մասին՝ նշանակություն պետք է տրվի Նոր Կտակարանի հատվածում անմորուս Քրիստոսի պատկերների տեղադրությանը։ Քրիստոսն անմորուս է ներկայացվում Մատթ. ԺԱ. 25–30-ի (թ. 449ա), Մարկ. ժ. 13–16 (թ. 467բ), ԺԳ. 1–13-ի (թ. 469բ), Ղուկ. Բ. 41–52 (թ. 476ա), ե. 33–38-ի (թ. 478 բ), Հովհ. Ա. 1 (թ. 496ա), ԺԸ. 28–40-ի (թ. 508բ) լուսանցքներում, Ոտնլվայի (Հովհ. ԺԳ. 1–20, թ. 505ա), Խորհրդավոր ընթրիքի (Ղուկ. ԻԲ. 14–23, թ. 491բ) տեսարաններում եւ Համբարձումից հետո՝ Հայտ. Ա. 9–20 (թ. 511բ), Գործք է. 35–39 (թ. 523բ), Ը. 26–40 (թ. 524ա), ժ. 44–48-ի (թ. 525բ) լուսանցքներում, ինչպես նաեւ՝ բժշկման տեսարաններում՝ Մատթ. Թ. 27–38 (թ. 448ա), ԺԲ. 22 (թ. 449բ), Մարկ. ե. 21–43 (թ. 464ա), ժ. 46–52 (թ. 468ա), Հովհ. Թ. 1–34 (թ. 501բ)։ Մինչդեռ մորուսով ներկայացվում է տերունական շարքից Մկրտության *(Մատթ. Գ. 13–17, թ. 444ա),* Երուսաղեմ մուտքի *(Ղուկ. ԺԹ. 29–40, թ. 489բ),* Համբարձման *(Ղուկ. ԻԴ. 50–53, թ. 494բ),* Ղազարոսի հարության *(Հովհ. ԺԱ. 28–46, թ. 503բ) եւ* Խաչելության *(Հովհ. ԺԹ. 17–27, թ. 509ա) տեսարաններում[1]։*

Ձեռագրում առանձնակի նշանակություն ունեն լուսանցքներում արված Քրիստոսի պատկերները, որտեղ նա հիմնականում անմորուս է ներկայացված։

---

[1] *Ձեռագրի տերունական շարքում բացակայում է* Այլակերպության *տեսարանը։*

Այստեղ, բժշկության տեսարաններից զատ, կարեւորություն է տրվում նաեւ Նոր Կտակարանի որոշ գլուխների, որոնց հարակից լուսանցքում պատկերված Քրիստոսի մանրանկարներն իրենց տեղադրությամբ ծառայում են որպես պատկերային մեկնաբանություն: Սրանցից կառանձնացնենք Նոր Կտակարանի Ղուկ. Ե. 33–39-ի կից լուսանցքում արված մանրանկարը (թ. 478բ): Այսպես՝ Ղուկ. Ե. 33–39-ի հարակից լուսանցքում մանրանկարիչը ներկայացնում է Պանտոկրատորի պատկերագրությամբ[2] անմորուս Քրիստոսին՝ կանգնած Ադամի գլխին (նկ. 1): Այն, որ Քրիստոսի ոտքերի տակ պատկերված գլուխը խորհրդանշում է Ադամին, ոչ ուղղակի ձեւով ընթեռնելի է Նոր Կտակարանի այն տողերում, որի հարակից լուսանցքում ներկայացված է այս պատկերը: Ավետարանի մեկնություններում՝ Ղուկ. Ե. 33–39-ում, հմմտ. Մատթ. Թ. 14–17, Մարկ. Բ. 18–22, Քրիստոսի խոսքերը[3] մեկնաբանվում են որպես Հնի նորոգում: Հովհաննես Երզնկացին այս հատվածը մեկնում է՝ օգտագործելով հին եւ նոր Ադամ այլաբանությունը, որտեղ Քրիստոսը՝ իբրեւ երկրորդ եւ նոր Ադամ[4], մարդկությանն ազատագրում է՝ սահմանելով նոր օրենք՝ «...զի ցուցցէ, թէ նոր Ադամ եղեւ փոխանակ հնոյն... նշանակէ, թէ նորոգելոց է զմարդն հին՝ զօրութեամբ խաչին, եւ լուծանելոց է զհնութիւն գրոյն՝ նորոգութեամբ հոգւոյն: ...զի որպէս զկաւ բրտի ձեւացուցեալ ի կարաս առանց հրոյ՝ ոչ ընդունի զջուր կամ ըզգինի, այսպէս եւ սոքա ծնունդք հողածնին Ադամայ՝ լինելով մարմին առանց վերստին հրոյն մաքրութեան, ոչ կարողասցին տանել զնորագոյն ուսմանս շնորհ»[5]: Մանրանկարն իր պատկերագրությամբ հղում է այլաբանական այս մեկնաբանությանը: Հին եւ նոր Ադամ այլաբանությունը մանրանկարում արտահայտված է նաեւ Քրիստոսի եւ

---

[2] *Պանտոկրատոր/Ամենակալ պատկերագրության մեջ Քրիստոսը ներկայացվում է մի ձեռքով օրհնելիս, իսկ մյուս ձեռքին՝ գիրք կամ գավար:*

[3] *«Ասաց եւ առակ մի առ նոսա, թէ՝ ոչ ոք արկանէ ի նոր հանդերձէ ի վերայ հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝ եւ զնորն պատառէ, եւ ընդ հնոյն չմիաբանի կապերտն որ ի նորոյն: Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ի տիկս հինս. ապա թէ ոչ պայթուցանէ գինին նոր զտիկսն հինս, ինքն հեղու եւ տիկքն կորնչին: Այլ գինի նոր ի տիկս նորս արկանելի է, եւ երկոքին պահին» (Ղուկ. Ե. 36–38, Մատթ. Թ. 16–17, Մարկ. Բ. 21–22): Նոր Կտակարանից հղումների համար տե՛ս Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, Մեծ Բրիտանիա, 1997:*

[4] *Պողոս առաքյալի թղթերում Քրիստոսը ներկայացվում է որպես երկրորդ եւ երկնավոր Ադամ (Ա. Կորնթ. Ժե. 45–50):*

[5] *Արարեալ ի սրբոյն Ներսիսէ Շնորհալւոյ մինչ ի համարն 17 հինգերորդ գլխոյն եւ անտի աւարտեալ յերանելւոյն Յօհաննու երզնկացւոյ որ եւ կոչի Մործորեցի, Մեկնութիւն Սուրբ Ավետարանին որ ըստ Մատթէոսի, Կոստանդնուպօլիս, 1825, էջ 209–210:*

Ադամի պատկերագրությունների նույնությամբ. երկուսն էլ ներկայացված են երիտասարդ եւ անմորուս[6]։

Ընդգծենք, որ Տարոնացու պատկերագրական համակարգում ինքնին մեկնողական նշանակություն ունեն Քրիստոսի անմորուս եւ մորուսով պատկերագրությունները։ Տարոնացին, ինչպես նշվեց, բացի Քրիստոսի՝ լուսանցքներում արված պատկերներից, փոփոխություն է մտցնում նաեւ Ոսնվայի *եւ* Խորհրդավոր ընթրիքի *պատկերագրության մեջ՝ այս տեսարաններում եւս Քրիստոսին ներկայացնելով անմորուս, մինչդեռ տերունական շարքի մյուս պատկերներում Քրիստոսը ներկայացված է ընդունված պատկերագրությամբ՝ մորուսով։*

5. ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՄՈՐՈՒՍ ՊԱՏԿԵՐԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁԸ

Քրիստոսին անմորուս ներկայացնելու միտումը հասկանալու համար դիմենք մեկնողական գրականությանը։ Այս առումով հարկ է նշել, որ մեկնություններում հատուկ նշանակություն է տրվում Քրիստոսի աստվածային էության տեսանելի եւ քողարկված դրսեւորումներին։

Քրիստոսի աստվածային էության քողարկված դրսեւորման տեսանկյունից կարեւորվում են Ավետարանի Տյառնընդառաջ *(Ղուկ. Բ. 22–38) եւ* Մանուկ Հիսուսը տաճարում *(Ղուկ. Բ. 41–52) դրվագները։ Իգնատիոս Սեւլեռնցու* Տյառնընդառաջի *դրվագի մեկնության մեջ ընդգծվում է Քրիստոսի աստվածային էության՝ Մարիամից եւ Հովսեփից սքողված լինելը՝ «Իսկ զայն, եթէ անբովանդակելի աստուածութիւնն բովանդակեալ է ի նմա, անգիտանային նոքա (Հովսեփը եւ Մարիամը.– Ս. Բ.)։ Քանզի այս էր օրէն եւ պատշաճ ծածկել զինքն ի նոցանէ, զի կարօղ եւ բաւական լիցին բնակիլ ընդ նմա։ Զի, թէ գիտէին նոքա, թէ աստուած է ամենակալ եւ արարիչ, զիա՞րդ հանդուրժէին կալ առաջի նորա եւ իբր ի մարդ հայիլ ի նա։ Զի եւ սնուցանել եւ կաթամբ կերակրել եւ զամենայն խնամս տղայոց պարտ էր առնել նմա։ Այսր աղագաւ ծածկել զինքն յարմար եւ պիտանացու էր։ ...Արդ յայտնեցաւ նա միայն Սիմէօնի,*

[6] *Այս այլաբանությունն արտահայտված է նաեւ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու՝ Ադամի գլխի պատկերաքանդակում, որը ներկայացված է Քրիստոսի պատկերագրությամբ։ Այստեղ օգտագործված է առավել տարածված մորուսով պատկերագրական ձեւը։ Այս պատկերաքանդակի նկարը տե՛ս* Ս. Տեր-Ներսեսյան, *Հայ արվեստը միջնադարում, Երեւան, 1975, նկ. 31, 34, 39։*

Յովհաննու եւ հօր նորա (Հովհաննես Մկրտչի.– Ս. Բ.)»[7]: Մինչդեռ Սիմեոն ծերունու դեպքում ընդգծվում է սքողված աստվածային էութեանը հոգով հաղորդ լինելը. այստեղ կարեւորվում է աստվածայինը հոգեւոր եւ ոչ մարմնական աչքերով տեսնելը. «...զի ոչ սոսկ ի մանուկ հայէր, այլ հոգւոյն աչօք երեւութացեալ զիմանալի հուր աստուածութեանն տեսանէր»[8]:

Մանուկ Հիսուսը տաճարում *Ղուկ. Բ. 41–51 դրվագի մեկնութեան մեջ եւս կարեւորվում է քողարկված աստվածային էութեան գաղափարը: Քանի որ Ղուկասի Ավետարանի Բ. 49–50 համարներում խոսվում է Քրիստոսի խոսքերին Մարիամի եւ Հովսեփի անհաղորդ լինելու մասին[9], ուստի մեկնութիւններում այս դրվագը բացատրվում է քողարկվածութեամբ: Մեկնիչը, հիշեցնելով ավետման ժամանակ հրեշտակի՝ Մարիամին ասած կանխասութիւնը, ընդգծում է Քրիստոսի աստվածային էութեան քողարկվածութիւնը նաեւ Մարիամից. «Զի թէպէտ եւ բուն ծայրագոյն բարձրութիւն նորա, որ Աստուծոյ է յատուկ, ծածկեցաւ ի նոցանէ, բայց այն, որ ի վեր էր ամենայնիւ, քան ըզբնութիւն մարդկան, յայտնի էր նոցա (Հովսեփին եւ Մարիամին.– Ս. Բ.) ...Զի ահա հրեշտակն նախքան ըզյղանալն ասաց, որ ծնանելոց է ի քէն, Սուրբ է եւ Որդի Աստուծոյ կոչեսցի: Արդ վասն զի պիտանացու էր, յայնժամ անգիտանալ նոցա...»[10]:*

Մյուս կողմից՝ Ավետարանի մեկնութիւններում, ինչպես նշվեց, էական նշանակութիւն է տրվում նաեւ Քրիստոսի աստվածային էութեան տեսանելի դրսեւորմանը: Արթմնի վիճակում աստվածային էութեանը հաղորդակցվելու՝ այն տեսնելու խորհուրդն էական դեր ունի մարդեղացած Բանի անսկիզբ էութիւնն ընդգծելու տեսանկիւնից: Այս առումով որպես Քրիստոսի աստվածային էութեան տեսանելի դրսեւորում՝ կարեւորվում են Ծնունդի, Մկրտության, Այլակերպության, Ղազարոսի հարության, Մուտքը Երուսաղեմ, Խաչելության *եւ Համբարձման դրվագները:*

Պետք է նշել, որ մեկնութիւններում տեսանելիութեան խնդիրն էական է ինչպես Քրիստոսի էութեան կարեւորման տեսանկիւնից՝ Քրիստոսն

---

[7] *Արարեալ սբ. Վարդապետին Իգնատիոսի ի խնդրոյ Տեառն Գրիգորիսի Հայոց կաթուղիկոսի, Մեկնութիւն սրբոյ ավետարանին որ ըստ Ղուկասու, Կոստանդնուպոլիս, 1824, էջ 87–88:*

[8] *Անդ, էջ 84:*

[9] *«Զի՞ խնդրէիք զիս, ո՞չ գիտէիք եթէ ի տան Հօր իմոյ պարտ է ինձ լինել: Եւ նոքա ոչ իմացան զբանն զոր խօսեցաւ ընդ նոսա» (Ղուկ. Բ. 49–50):*

[10] *Արարեալ սբ. Վարդապետին Իգնատիոսի, նշ. աշխ., էջ 98–99:*

իբրեւ Աստված եւ պատմական անձ, այնպես էլ՝ Քրիստոս-Բանի եւ Հայր Աստծու էության համագոյության տեսանկյունից:

Այսպես՝ իբրեւ Քրիստոսի աստվածային էության տեսանելի դրսեւորում դիտարկվող Մկրտության տեսարանում Աստծու՝ աղավնու տեսքով երեւումը (Մատթ. Գ. 13–17, Մարկ. Ա. 9–11, Ղուկ. Գ. 21–22) Ներսես Շնորհալին մեկնում է որպես Քրիստոսի աստվածային էությունը փաստող իրողություն. «Եւ զինչ պէտք էին երեւելի տեսլեամբ իջանել հոգւոյն, այն որ ընդ նմա էր միշտ, եւ նմին իսկ էր հոգին՝ որպէս եւ Հօր: Քանզի հրէայքն մեծ իմն զՅովհաննէս կարծէին... Իսկ զՔրիստոս իբրեւ ի դոյզն յաղջկանէ միոջէ համարէին ծնեալ... Եւ զի մի լիցին կարծել զայնպիսիս, վասն այնորիկ ընդ մկրտելն Յիսուսի երկինք բանային, եւ հոգին իջանէր, եւ Հայր զնա յայտնէր հոգւովն, թէ դա է որդի իմ սիրելի...»[11]:

Շնորհալին, դատապարտելով արիոսական ուսմունքը, Ավետարանի այս դրվագը մեկնում է նաեւ Քրիստոսի եւ Հայր Աստծու համագոյության տեսանկյունից. «Դարձեալ որդիութեանն կոչմամբ զբնութեանն միաւորութիւն ցուցանէ, որ ըստինքեան, զի ծնունդ է Հօր եւ ոչ ստացական՝ ըստ Արիոսի: Իսկ սիրելին ասել՝ զհամակամութիւն նշանակէ...»[12]:

Ղազարոսին հարության տալը (Հովհ. ԺԱ. 28–46)՝ իբրեւ աստվածային էության տեսանելի դրսեւորում, եւս մեկնվում է Հայր Աստծու եւ Որդու՝ Քրիստոսի համագոյության կարեւորման տեսանկյունից: Ղազարոսի հարության հրաշքի մեկնությունը կապվում է Քրիստոսի աստվածային էության փառաբանությունը ներկայացնող «Մուտքը Երուսաղեմ» պատումի մեկնաբանությանը (Հովհ. ԺԲ. 12–19), քանի որ դրանք փոխկապակցված են նաեւ Հովհաննեսի Ավետարանում (Հովհ. ԺԲ. 17–18). «...Տեսցուք դարձեալ եւ զայն, եթէ զի փառաւոր լիցի Որդի Աստուծոյ այնուիկ, նախ ի Հայր զբանն ձգէ եւ ապա առընթեր դնէ, զոր աստուածական հրամանաւն կոչելոց էր իշխանաբար զչորեքաւարեայ զմեռեալն եւ այնպէս զՀաւր եւ զիւր փառակցութիւնն եւ զգործակցութիւնն ցուցանէ եւ յայտ առնէ: Դարձեալ եւ զփառաբանութիւնն, որ զկնի լինելոց էր

---

[11] *Տե՛ս* Ներսէս Շնորհալի, *նշ. աշխ., էջ 66:*

[12] *Մեկնության մեջ Շնորհալին քննում է նաեւ Քրիստոսի ծնունդի իրական եւ ոչ երեւութական լինելու խնդիրը. «Եւ դարձեալ երեսնամեայ գալովն ի մկրտութիւն՝ յամօթ արար զմարկիոնացիան, որք առ աչօք նմա ասեն առնուլ զմարմինն, զի թէ ոչ զգեցաւ մարմին ճշմարտապէս, ի մկրտութիւնն որո՞վ մերձենայր ...երեսնամեայ ասելով՝ զմանկութենէն յայտ առնէ եւ ոչ զմշտնջենաւորութենէն» (տե՛ս* Ներսէս Շնորհալի, *նշ. աշխ., էջ 64, 67:*

ի ծերոց եւ ի տղայոցն, կանխաւ դնէ, զոր յորժամ տեսին զնա եկեալ յերուսաղէմ»[13]։

Կարեւորելով աստվածայինին արթմնի հաղորդակցվելը՝ մեկնություններում մինչեւ անգամ համեմատվում է Մկրտության եւ Ծնունդի ժամանակ ականատեսների քանակը, որտեղ նշվում է, որ Աստծու տեսանելիությունը Մկրտության ժամանակ, ի տարբերություն Ծնունդի, բազմության առջեւ է լինում[14]։ Աստվածային էության անսքող՝ տեսանելի դրսեւորման տեսանկյունից առանձնահատուկ մեկնաբանություն է տրվում Համբարձմանը։ Ըստ մեկնության՝ Քրիստոսի աստվածային էության լիարժեք ճանաչումը տեղի է ունենում միայն Համբարձման ժամանակ. «Արդ վասն զի Որդի էր նա մշտնջենաւորին Աստուծոյ ...Այլ նոքա ոչ իմացան զբանն, թէպէտ եւ չէր կարի անյայտ։ ...Արդ վասն զի պիտանացու էր, յայնժամ անգիտանալ նոցա, եւ կարի օգտակար յետ վերանալոյ նորա յայտնիլ այսոցիկ ամենեցունց, որք քարոզիչք են աստուածութեան նորա»[15]։

---

[13] Տե՛ս Թանգարան հայկական հին եւ նոր դպրութեանց, Նանայի Ասորիոց վարդապետի Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին, առաջ.՝ Քերոբէ Ա. Զրաքեան, Վենետիկ, 1920, էջ 249։

[14] «Յաղագս որոյ գայ խոնարհութեամբ կնիք առնուլ ի ծառայէն, բանայ զերկինս, վկայի ի հօրէ եւ յայտնեալ լինի ի հոգւոյն։ Տեսօղ առնէ աքանչելեացն, որ քարոզեացն զնա բազմութիւնն, որ մերձ էին նմա, եւ ոչ զսակաւս ոմանս՝ որպէս ի ծննդեանն» (տե՛ս Արարեալ սբ. Վարդապետին Իգնատիոսի, նշ. աշխ., էջ 108)։

[15] Անդ, էջ 98, 99։ Համաբարձումը՝ իբրեւ Քրիստոսի աստվածային էության տեսանելի դրսեւորում, մեկնություններում համեմատվում է Քրիստոսի հարության հետ։ Մեկնողական տեսանկյունից նշանակություն է տրվում Ավետարանում Քրիստոսի հարության պահի անտեսանելի լինելուն. ընդգծվում է այն, որ աշակերտները չեն տեսնում Քրիստոսի հարության պահը, բայց տեսնում են հարությունից հետո եւ հակառակը՝ տեսնում են համբարձումը, բայց չեն տեսնում համբարձվելուց հետոն. «Իսկ ընդէր տեսանելով ոչ յարեաւ ի գերեզմանէն եւ «տեսանելով վերացաւ»։ Քանզի յարութեան աւարտն տեսին, նշանաւքն եւ խաւսակցութեամբ առաքելոցն, այլ սկիզբնն՝ ոչ եւս։ Իսկ զհամբարձմանն սկիզբնն տեսին, այլ զկատարածն՝ ոչ եւս» (տե՛ս Սարգիս Կունդ, Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու, աշխատ.՝ Ե. եպս. Պետրոսյանի, Էջմիածին, 2005, էջ 627)։ Պետք է նշել, որ Համբարձման տեսարանի պատկերագրական այն տարբերակը, որը կիրառվում է հայկական մանրանկարներում (մանդորլայի մեջ պատկերված Քրիստոս Պանտոկրատորը, իսկ ներքեւում՝ աշակերտների խումբն ու Տիրամայրը), ներկայացնում է համբարձման տեսանելի պահը (քննարկվող ձեռագրում Համաբարձման տեսարանը՝ թ. 494բ) եւ ուղղակիորեն արտահայտում է այս տեսարանի մեկնողական նկարագրությունը. «Աստուած նստեալ յամպս» երագունս, եւ նոցա արթուն գոլով տեսանէին զերեալսն (տե՛ս Սարգիս Կունդ, նշ. աշխ., էջ 628)։ Մինչդեռ արեւմտյան պատկերագրությունը ներկայացնում է այն պահը, երբ համբարձվող Քրիստոսը տեսողությանը դառնում է անմատչելի. աշակերտների եւ Տիրամոր վերեւում պատկերվում են միայն համբարձվող Քրիստոսի ոտնաթաթերը։ Արեւմտյան ձեռագրերերում այս պատկերագրությունը տե՛ս MS 66 (France, between 1225–1250, Morgan Library), fol. 558r, MS M 295 (Belgium, Liege 1260, Morgan Library), fol. 2r, Ms 107 (2011.23) (Italy, Bologna, about 1250–1262, J. Paul Getty Museum), fol. 450)։

Ըստ էության՝ մեկնություններում աստվածային էության զորությունն ու փառքը սքողելու կամ տեսանելի դարձնելու հարցում կարեւորվում է Աստծու կամքի գործոնը։

Քննարկվող ձեռագրում Տարոնացին Քրիստոսին մորուսով է ներկայացնում միայն այն տեսարաններում, որոնք, ըստ մեկնությունների եւ ըստ ավետարանական բնագրի, կարեւորվում են որպես Քրիստոսի աստվածային էության տեսանելի դրսեւորում, սրանք են՝ Մկրտության, Ղազարոսի հարության, Երուսաղեմ Մուտքի, Խաչելության[16] *եւ* Համբարձման *տեսարանները[17]։ Մինչդեռ լուսանցքներում եւ* Ոտնլվայի *ու* Խորհրդավոր Ընթրիքի *տեսարաններում Քրիստոսը պատկերված է անմորուս։*

Անմորուս պատկերագրությամբ ներկայացված լուսանցապատկերներից թերեւս քննենք Մանուկ Հիսուսը տաճարում՝ *Ղուկ. Բ. 41–52 (ՄՄ 206, թ. 476ա) եւ Մարկ. ԺԳ. 1–13-ի (ՄՄ 206, թ. 469բ) հարակից լուսանցքներում պատկերվածները։* Մանուկ Հիսուսը տաճարում *Ղուկ. Բ. 41–52-ի կից լուսանցքում Քրիստոսը ներկայացված է անմորուս եւ Պանտոկրատորի պատկերագրությամբ (նկ. 2)։ Հաշվի առնելով այն, որ, ըստ ավետարանական պատմության, այստեղ Քրիստոսը տասներկու տարեկան է ներկայացվում (Ղուկ. Բ. 42), թերեւս կարելի էր այս տեսարանում Քրիստոսի անմորուս պատկերագրությունը համարել պատմողական։ Մինչդեռ այստեղ էական նշանակություն ունի նաեւ այն, որ Քրիստոսն ամենակալ Աստծու (Պանտոկրատոր) կեցվածքով է ներկայացված։ Տարոնացին այս պատկերագրությամբ՝ անմորուս եւ ամենակալ, Քրիստոսին ներկայացնում է նաեւ Մարկ. ԺԳ. 1–13-ի հարակից լուսանցքում, որտեղ Քրիստոսը խոսում է աշխարհի վախճանի մասին (նկ. 3)։*

Հաշվի առնելով այս պատկերների տեղադրությունը՝ ակներեւ է, որ կարեւորություն է տրվել Ավետարանի գլուխների այն հատվածներին, որտեղ Քրիստոսն այլաձեւությամբ է վկայում Իր մասին. Քրիստոսի աստ-

---

[16] *Այստեղ որպես աստվածային էության տեսանելի դրսեւորում՝ կարեւորվում է խաչի վրա Հիսուսի մահվան պահը, երբ տաճարի վարագույրը պատռվում է, եւ երկիրը ցնցվում է (Մատթ. ԻԷ. 51–54, Մարկ. ԺԵ. 38–39, Ղուկ. ԻԳ. 44–49)։*

[17] *Այստեղ չենք նշել Քրիստոսի* Այլակերպությունը, *քանի որ Տարոնացին այս ձեռագրում ինչ-ինչ պատճառներով այս տեսարանը չի պատկերել, սակայն ըստ ավետարանական բնագրի եւ մեկնությունների՝ այլակերպությունը եւս կարեւորվում է որպես Աստծու էության տեսանելի դրսեւորում։* Այլակերպության *մեկնությունը՝ իբրեւ Աստծու էության տեսանելիություն, տե՛ս* Սարգիս Կոիւնդ, *նշ. աշխ., էջ 226, 232։*

վածային բնույթը սքողված է այլաբանական խոսքով, այսինքն՝ առկա է աստվածային էության քողարկված դրսեւորում։

Եթե քննարկվող մանրանկարներում Քրիստոսին որպես ամենակալ Աստծու պատկերագրությամբ (Պանտոկրատոր) ներկայացնելն անմիջականորեն հղում է աստվածային անժամանակյա էությանը, ապա անմորուս պատկերագրությունը՝ այդ էության սքողված դրսեւորմանը[18]։

Այս ուղերձն ունեն ինչպես այս երկու մանրանկարները (նկ. 2, 3), այնպես էլ վերեւում քննարկված մանրանկարը, որտեղ եւս Քրիստոսը ներկայացված է անմորուս եւ Ամենակալ պատկերագրությամբ (նկ. 1)[19]։

Ըստ էության՝ խորհրդավոր ընթրիքի *(Մատթ. ԻԶ. 20–30, Մարկ. ԺԴ. 17–25, Ղուկ. ԻԲ. 14–23) եւ* Ոտնլվայի դրվագներում *(Հովհ. ԺԳ. 1–20) եւս չկա աստվածային էության տեսանելի դրսեւորում. Քրիստոսն այլաբանորեն է խոսում փրկագործության տնօրինության՝ մահվան եւ հարության՝ նոր կարգի հաստատման մասին։ Հետեւաբար այս տեսարաններում եւս Քրիստոսն անմորուս է ներկայացված[20] (ՄՄ 206, Ղուկ. ԻԲ. 14–23, թ. 491բ, Յովհ. ԺԳ. 1–20, թ. 505ա) (նկ. 4 եւ նկ. 5)։*

Հարկ է նշել, որ ձեռագրում Քրիստոսի անմորուս պատկերագրությունը երկու ուղերձ ունի՝ Նոր Կտակարանի հատվածում մինչեւ Համբարձումը ներկայացված Քրիստոսի անմորուս պատկերագրությունն արտահայ-

---

[18] *Ընդգծենք, որ հայկական այն ձեռագրերում, որտեղ առկա է* Մանուկ Հիսուսը տաճարում *տեսարանը ներկայացնող մանրանկար, Քրիստոսը միշտ ներկայացված է անմորուս եւ Պանտոկրատորի պատկերագրությամբ՝ գահին բազմած։ Սակայն պետք է նշել, որ Տարոնացու պարագայում* Մանուկ Հիսուսը տաճարում՝ *Ղուկ. Բ. 41–52-ի լուսանցքում Քրիստոսի անմորուս պատկերագրությունն ընթեռնելի է այս տեսարանի վերոնշյալ մեկնողական ընկալման տեսանկյունից եւ ոչ կանոնական պատկերագրության եւ կապվում է ձեռագրում Քրիստոսին անմորուս ներկայացնելու ընդհանուր միտումի հետ։* Մանուկ Հիսուսը տաճարում *տեսարանում Քրիստոսի պատկերագրությունը հայկական այլ ձեռագրերում տե՛ս Վենետիկի Մխիթարյան գրադարանում պահվող Վեն. 888/159 Ավետարանում (թ. 143), Ուլթերսում պահվող Թորոս Ռոսլինի նկարազարդած Ավետարանում (1262 թ.,* MS. W. 539, fol. 213v*), Երուսաղեմում պահվող իշխան Վասակի Ավետարանում (ԺԴ. դար, Եղմ. 2568, թ. 161բ)։*

[19] *Այս ուղերձն ունի նաեւ Մատթ. ԺԱ. 25–30-ի հարակից լուսանցքում Ամենակալ պատկերագրությամբ անմորուս Քրիստոսի պատկերը (ՄՄ 206, թ. 449ա), որը դարձյալ ներկայացված է Նոր Կտակարանի այն հատվածում, որտեղ Քրիստոսը քողարկված՝ այլաբանությամբ է վկայում Իր աստվածային էության մասին։*

[20] *Հատկանշական է, որ Տարոնացին* խորհրդավոր ընթրիքի *եւ* Ոտնլվայի *տեսարաններում Քրիստոսի կզակին փոքր մազածածկույթ է պատկերում՝ սրանով թերեւս ակնարկելով Քրիստոսի աստվածային էության լիարժեք ճանաչման պահի մոտենալը, որն ըստ մեկնություններ՝ տեղի է ունենում Քրիստոսի համբարձման ժամանակ (տե՛ս Արարեալ սբ. Վարդապետին Իգնատիոսի, նշ. աշխ., էջ 98, 99)։*

տում է Քրիստոսի աստվածային էության քողարկված դրսեւորումը, մինչդեռ Համբարձման տեսարանից հետո անմորուս պատկերագրությունը խորհրդանշում է ուղղակիորեն աստվածային անժամանակյա էությունը[21] եւ Հոր եւ Որդու համագոյությունը[22]։

Քրիստոսի աստվածային անժամանակյա էության, ինչպես նաեւ Հոր եւ Որդու համագոյությանը հղումն ունի նաեւ Հովհաննեսի Ավետարանի անվանաթերթին ներկայացված անմորուս Քրիստոսի պատկերը[23], քանի որ ըստ մեկնությունների՝ Հովհաննեսի Ավետարանը, ի տարբերություն համատեսական Ավետարանների, շեշտադրում է Քրիստոսի աստվածային էությունը[24]։ Ուստի Հովհաննեսի Ավետարանի անվանաթերթին[25] եւ ձեռա-

---

[21] Համբարձումից առաջ ասելով՝ նկատի է առնվում չորս Ավետարաններում ներկայացվող Քրիստոսի երկրային գործունեությունը՝ մինչեւ համբարձումը, իսկ համբարձումից հետո ասելով՝ նկատի է առնվում չորս Ավետարաններից հետո եկող գրքերում ասվածը (Գործք առաքելոց, Պողոս առաքյալի թղթեր, Ընդհանրական թղթեր եւ Հայտնություն), որտեղ նկարագրվող դեպքերն ու գործողությունները տեղի են ունենում Քրիստոսի երկրային կյանքից հետո, եւ որտեղ Քրիստոսի երկրային կյանքի եւ տնօրինության մասին խոսվում է հետադրությամբ։ Քննարկվող ձեռագրում, չորս Ավետարաններից բացի, կան նաեւ Նոր Կտակարանի Հայտնության գիրքը (ՄՄ 206, թ. 511բ-517բ), Գործք առաքելոց-ը (ՄՄ 206, թ. 520բ–534ա), Ընդհանրական թղթերը (ՄՄ 206, թ. 534բ–542բ), Պողոս առաքյալի թղթերը (ՄՄ 206, թ. 551ա–587բ)։

[22] Հատկանշական է, որ Համբարձումից հետո Տարոնացին Քրիստոսին մորուսով է ներկայացնում նաեւ Գործք ԻԳ. 11 գլխի կից լուսանցքում (թ. 531բ) եւ «Պողոսի թուղթը հռոմեացիներին» գլխի հանդիպակաց էջին (թ. 550 բ)։ Այստեղ Գործք ԻԳ. 11 հատվածը կարեւորվել է որպես Աստծու տեսանելիության՝ երեւալու պահ. «եւ ի վաղուեան գիշերին եկաց առ նմա Տէր եւ ասէ՝ քաջալերեաց, Պաւղէ, զի որպէս վկայեցեր վասն իմ յԵրուսաղէմ, սոյնպէս պարտ է քեզ եւ ի Հռոմ վկայել», իսկ «Պողոսի թուղթը հռոմեացիներին» գլխի հանդիպակաց էջում Քրիստոսին ներկայացնելով մորուսով՝ մանրանկարիչը կապ է ստեղծել Գործք ԻԳ. 11 հատվածի հետ, որտեղ Պողոսին հայտնված Քրիստոսը հանձնարարում է Իր մասին վկայել Հռոմում։

[23] Այստեղ Հովհաննեսի Ավետարանի (Հովհ. Ա. 1) «Ի սկզբանէ էր Բանն…»-ի «Ի» գլխատառը ներկայացված է ավետարանիչների խորհրդանշաններով, որտեղ Մատթեոսի Ավետարանը խորհրդանշող հրեշտակը ձեռքերով պահում է գահը, որի վրա Ամենակալի պատկերագրությամբ ներկայացված է անմորուս Քրիստոսը (ՄՄ 206, էջ 496ա)։ Տարոնացու նկարազարդած Վեն. 1917 եւ ՄՄ 6289 Ավետարանների՝ Հովհաննեսի անվանաթերթերը եւս արված են այս պատկերագրությամբ։

[24] Այս մասին Սարգիս Կունդը գրում է. «…քանզի Մատթէոս եւ Մարկոս եւ Ղուկաս ի խոնարհագոյն ծնընդեն են Տէրն մերոյ սկիզբն արարին իւրեանց աւետարանին …որ ըստ մարդեղութեան ի մեզ տպաւորեցաւ խորհուրդն։ Իսկ Յովհաննէս ի հայրական ծնընդենեն սկիզբն արարեալ աստուածաբանապէս ճառէ եւ այն աներեր եւ անժամանակ է, քանզի ասէ ի սկզբանէ էր Բանն եւ ինքն Բանն Աստուած էր» (տե՛ս ՄՄ 5448 (թ. 7բ) (Հովհ Ա. 1–18)։

[25] Նշենք, որ Հովհ. Ա. 1–18 գլխում «Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն…» դրվագը մանրանկարով արտահայտելու օրինակները հայկական ձեռագրերում շատ չեն։ Պահպանված ձեռագրերից Հովհաննեսի Ա. 1–18-ի ուղերձն ունի Վենետիկի Մխիթարյանների գրադարանում պահվող Վեն. 888/159 Ավետարանի (1200 թ. Ուրֆա, Կիլիկիա)՝ Հովհաննեսի անվանաթերթի պատկերագրությունը, որտեղ էջի մի կողմում ներկա-

գրի՝ Նոր Կտակարանի հատվածում Համբարձումից հետո ներկայացված երիտասարդ, անմորուս պատկերագրությունը նույն ուղերձն ունի, ինչ ձեռագրի՝ Հին Կտակարանի հատվածում, որտեղ Աստված ներկայացված է բացառապես անմորուս եւ երիտասարդ: Այս դեպքում թերեւս հղում է արվում Հոր համագոյությանը Բանն Աստծու հետ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Թորոս Տարոնացու նկարազարդած ՄՄ 206 Աստվածաշնչի մանրանկարչության ուսումնասիրությունը եւ արեւմտյան ձեռագրերի պատկերագրության հետ համեմատությունը ցույց են տալիս, որ Տարոնացին որոշ առումով փոխառել է արեւմտյան ձեռագիր Աստվածաշունչ մատյանների պատկերագրական համակարգը[26]՝ դրանում կատարելով որոշակի փոփոխություններ, որոնցից թերեւս ամենից էականն անմորուս Քրիստոսի պատկերագրության կիրառությունն է: Տարոնացու դեպքում առկա է այս պատկերագրության կիրառության այլ տրամաբանություն. բացի այն, որ անմորուս պատկերագրությունը հղում է Բանի անստեղծ հավերժական էությանը, այն ունի նաեւ մարդեղացած Բանի անժամանակյա աստվածային էության քողարկված դրսեւորման ուղերձ: Մեկնողական այս հղումը չի հանդիպում արեւմտյան ձեռագրերի նկարազարդումների մեջ, այն չկա նաեւ հայկական այն ձեռագրերում, որտեղ առկա է այս պատկերագրությունը:

---

*յացված է Հինավուրցի պատկերը (*fol. 213v*), հակառակ կողմում՝ այս պատկերին զուգահեռ՝ անմորուս Քրիստոսի (*fol. 214*): Տարոնացու պարագայում անմորուս պատկերագրությունն է արտահայտում Հովհաննեսի Ավետարանի Հովհ. Ա. 1–18 դրվագում ասվածը: Նշված Վենետիկի Մխիթարյանների գրադարանում պահվող Վեն. 888/159 Ավետարանի պատկերները տե՛ս* S. Der Nersessian, Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, figs. 79, 80*:*

[26] Արեւմտյան Աստվածաշունչ մատյանների նկարազարդմանը Տարոնացին, ըստ երեւույթին, ծանոթացել է Ֆրանցիսկյան եւ Դոմինիկյան միաբանների բերած ձեռագրերի միջոցով, որոնք այդ ժամանակ Հայաստանում աշխույժ քարոզչական գործունեություն էին ծավալում: Փոխառության տեսակետից հատկանշական են Մննդոց գրքում «ի» սկզբնատառի ներսում՝ տառի ուղղահայաց հատվածում՝ մեդալիոնների մեջ, ներկայացված արարման վեց օրն ու յոթերորդ հանգստի օրը, Սուրբ Երրորդությունը ներկայացնող պատկերի տեղադրությունը՝ Սաղմոս ՃԺ. 1–7-ի կից լուսանցքում, ինչպես նաեւ Սբ. Երրորդությունը ներկայացնող երկու անձերի պատկերագրությունը, Հին Կտակարանում Հինավուրցի պատկերագրության բացակայությունը, Հին եւ Նոր Կտակարաններում Քրիստոս-Լոգոս պատկերագրության կիրառությունը եւ այլն:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Անմորուս Քրիստոս, մարդեղացած Բան, Եսայի Նչեցի, Գլաձոր, պատկերագրություն, մեկնություն, աստվածային էություն, ձեռագիր, Դոմինիկյան միաբանություն, Ֆրանցիսկյան միաբանություն, Թոմաս Ֆ. Մեթյուս, Հերբերտ Լ. Կեսլեր:

РЕЗЮМЕ

В статье впервые рассматривается иконография Христа (без бороды) в рукописной Библии, иллюстрированной Торосом Таронаци, известным армянским художником-миниатюристом XIV века. Иконография Христа (без бороды) рассматривалась в контексте как армянского средневекового искусства, так и христианского в целом. В статье в основном затрагивается проблема изображения Христа в двух образах (с бородой и без бороды) в одной и той же рукописи. Здесь рассматривается иконография Христа-Логоса (воплощенного Логоса и Логоса вне воплощения), которая изучалась как в армянских, так и в западных рукописях с упором на экзегетический смысл.

Таким образом, иконография Христа (бородатого и безбородого) в рукописной Библии, иллюстрированной Торосом Таронаци, рассматривалась также в контексте богословских толкований. В статью включены выдержки из экзегезы Нерсеса Шнорали (XII век), Игнатиоса Севлернци (вторая половина XI века, первая половина XII века), Ованнеса Ерзнкаци (вторая половина XIII века, первая половина XIV века), Саркиса Кунда (XII век) и Наны Асори (IX век).

SUMMARY

The current paper examines for the first time the iconography of Christ (without a beard) in the manuscript Bible illustrated by T‘oros Taronac‘i, a renowned 14th century Armenian miniaturist. The iconography of Christ (without a beard) was considered in the context of both Armenian medieval art and Christian art in general. The article mainly deals with the problem of depicting Christ in two ways (with and without a beard) in one and the same manuscript. The iconography of Christ

the Logos (the Incarnate Logos and the Logos beyond Incarnation), which has been studied in both Armenian and Western manuscripts with an emphasis on exegetical meaning, is considered here.

Thus it examines the iconography of Christ (bearded and beardless) in the manuscript Bible illustrated by T‘oros Taronac‘i within the frames of the Armenian theological exegesis. The paper capitalizes on the excerpts from the exegetical works of Nerses Shnorhali (12th century), Ignatios Sevleṛncʻi (the second half of the 11th and the first half of the 12th centuries), Hovhannes Erznkacʻi (the second half of the 13th and the first half of the 14th centuries), Sargis Kund (12th century), and Nana Asori (9th century).